ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2020 թվականի N 379

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 03.12.2020Թ. ԹԻՎ 371 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.04.2013թ. թիվ 1166 սեղանամատյանով կնքված անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ վարձակալության պայմանագրի, 25.12.2015թ. թիվ 2762 գրանցամատյանով հաստատված վերը նշված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնության և 18.12.2017 թվականի թիվ 3257 գրանցամատյանով հաստատված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագրի համաձայն, Ստեփանավան համայնքի Միլիոն փողոց թիվ 1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկից, ընդհանուր 83.88 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով մինչև 30.07.2020թ. ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Հիմք ընդունելով ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից ներկայացված դիմումը, վերը նշված պայմանագիրը և համաձայնությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Երկարաձգել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Միլիոն փողոց թիվ 1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ն հարկում գտնվող 83.88 քմ ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը անորոշ ժամկետով:
2. Ոչ բնակելի տարածքի վարձավճարի չափը թողնել անփոփոխ համաձայն 25.12.2015թ. թիվ 2762 գրանցամատյանով հաստատված համաձայնության 2 կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2020 թվականի N 380

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈԲԵՐՏ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 26.06.2019թ. թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 14.12.2020թ. թիվ 99/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 23.12.2020թ. նիստի արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի Անդրանիկի փողոցի թիվ 5 հասցեի բնակիչ Ռոբերտ Մեսրոպյանին տրամադրել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ